

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵԿԵՂԵՑՄԿԱՆ ՏՈՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ

ՄԵԾ ՊԱՀՔ (ՄԵԾ ՊԱՍ)

Բուն բարեկենդանին հաջորդող մեծ պասի առաջին օրվա ամենակարևոր իրադարձությունը ախալոնի երևան գաղն էր: Զատկից յոթ շաբաթ առաջ, տաճ մեծը (տատը) վերցնում էր մի հատ ախ կամ կարտոֆիլ, վրան ամրացնում էր յոթ փետոր: Ամեն կիրակի, եկեղեցոց վերադառնալոց հետո, հանում էին փետորներից մեկը՝ մինչև մեծ պասի վերջանալը: Ցոթերորդ շաբաթը հանում էին վերջին՝ կաղմիք փետորը:

ՄԻՋԻՆՔ (ՄԻՋՈՆՔ)

Մեծ պահքի կիսվելը կոչվում է Միջինք: Մեծ պասից երեք շաբաթ անց որեքշաբթի օրը միջինքն էր:

Միջինքի որրաթ երեկոն կոչվում է «Քառասուն մանկունք»: Հավաքվում էին աղջիկները մեկի տաճը և ծունը դնում 40 մանկանց համար:

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանկան քարեխոս,
Լիճքը, լիճքը, լճքեցավ,
Քառսուն մանուկ թըմմեցավ:

Ամեն մանուկի համար 40 անգամ ծունը էին դնում և վեր կենում: Այսպէս ամբողջ գիշերը $40 \times 40 = 1600$ անգամ ծունը դրած էին լինում:

Սուպոտյան այս աղջիկները միմյանց գլուխ էին լվանում ի հիշատակ 40 մանկանց և գնում էին եկեղեցի: Եկեղեցում մեծ կոճքի մեջ ջուր էր լցոված, որի ներսում շրջագծով կացված էին 40 մոմերը վառվում էին այնքան, մինչև պարպելը և ընկնում էին թասի մեջ, դա քառասուն մանուկների խեղդվելու հիշատակին էր նվիրված:

ԾԱՂԿԱԶԱՐԴ (ԾԱՌՋԱՐԴԱՐ)

Ծաղկազարդը մեծ պասի նախավերջին կիրակնօրյա տոնն էր: Այդ օրվա ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքի և ցանքի նախապատրաստություններին: Ալեքսանդրապոլիցիները ծաղկազարդը «ծաղկարդար» են կոչում: Այդ օրը եկեղեցում օրհնում էին ուռենու ճյուղեր: Արարողության մեջ գլխավորը Անդաստանն էր, երբ եկեղեցու ատյանում խաչ ու ավետարանով և թափորով օրհնվում էր ձիթենյաց ոստը (մեզ մոտ ուռենու դալար ճյուղը), որպեսզի «օրհնեսցի և պահանցի արեւելեան, արեւմտեան, հարաւային և հիւսիսային կողմն աշխարհի: Վաճքս, անապատս, քաղաքս, գիւղս, եւ բնակեալ ժողովուրդ ի սոսա»:

Կիրակի օրը օրհնած ճյուղը բաժանում էին ժամավորներին: Մարդիկ տանում էին տները և դնում ցորենի ամբարը, որ օրհնություն լիներ հացին: Երբեմն էլ օրհնած ճյուղը դնում էին շրի մեջ և այդ շուրը խմեցնում էին վախեցածին:

Ծաղկարդարին գնում էին եկեղեցի, օրհնած ճյուղ բերում Առահարսների համար, եթե շատ բողբոջներ ունենար ճյուղը, հոյի կինը տղա կունենար, չէ՞ որ տղան է օշախ ծխեցնողը, բարիք տվողը:

Ինչպես Քրիստոսին, որպես եկեղեցու փեսայի, դիմավորեցին ոստերով, այդ օրն էլ հայ ընտանիքներում իրենց հարսներին դիմավորում էին նման ծեսով և մաղթանքներով:

Եկեղեցուց բերված ճյուղը դառնում էր տան համար հիշատակի բազմախորհուրդ մի զարդ, առը բերվելուց հետո գրավում էր հնի տեղը, իսկ վերջինս պահվում էր որոտներն ու կարկուտները փարատելու համար: Հին ճյուղն այրում էին արտերի վրա, որպես ավետումը վերազարթոնքի, մի նոր տարեշրջանի:

Կիրակի առավոտյան միայն տղա երեխաները ուռենու դալար ճյուղները ձեռքներին կամ ծիծենակ պտտեցնելով (թիթեղյա, ատամնավոր ծաղկեպսակ հիշեցնող սարք, երկար կոթով) շրջում էին տնից տուա և երգում:

Ծեռ-ծեռ ծիծենակ,
 Աստծու հալալ պիպենակ,
 Ընկերս ընկավ ծովը,
 Ծովեն ելավ ծիրանը,
 Խունկ առեք, մոմ առեք,
 Իմ կարմիր հավկիթս գտեք:

Տնեցիները երեխաներին տալիս էին հավկիթ, շաքար, հատիկ (հատիկ էին տալիս, որ արտերն անձրև գար):

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԾԱԲԱԹ

Ծաղկազարդին հաջորդում է Չարչարանաց շաքաթը: Ժողովուրդը այն կոչում է Ավագ հինգշաբթի:

Այդ օրը գնում էին Առահարսներին «դարձ բերելու»: Լուս աչքով, արևով պիտի բերեին, և հենց եկեղեցու զանգերը հաշեին, հարսին տանից դուրս էին հանում:

Ավագ հինգշաբթի Ավագների տոնն է: Այդ օրը անպայման «խնոցի» էին հարում, կորան հավերին թուխս էին դնում, թխամորը նստեցնում էին և «խորոց» ունեցողի ձվերի վրա, որ տան նորահարսն էլ պտղավորվեր, օշախին բազմունք բերեր: Մածուն պիտի մերեին (մածուն մերոց), «այդ օրը մերան պիտի բռնես, որ տանըդ օրինանք և մաքրություն լինի»:

Չարչարանաց շաբաթին հարսները լուս առավոտից մինչև ուշ գիշեր խմոր պետք է հունցեին, որպես նշանարք Քրիստոսի մարմնի: Այդ օրվա շնորհքով այդ գիշեր ծնվածներին Հարություն էին կոչում՝ ի պատիվ Քրիստոսի հարության: Ժողովրդական ավանդական պատկերացմամբ այդ օրը ծուատոն էր՝ հղի հարսը ոչ մի գործ չպիտի աներ, որ ծնվող երեխայի մարմնի մասերը ծուու չլինեին: Գլուխ չեին լվանում, որ չգժվեին, օճառ չեին գործածում, որ կակիծ չտեսնեին, յոթ հավկիթ էին խաշում, կիրակի օրը ուտում, որ ատամները չցավեին, չհիվանդանային գոտկատեղի ցավով:

Հնում հավատում էին, որ Զատկի իրիկունը ծնվածը իմաստուն է լինում, այդ գիշեր մատաղ էին անում, և եթե այդ մատաղի՝ «մալի թիակի» ուկորը թրջեին մեռնաշրով և կնքեին երեխայի ձեռնադրությամբ եկեղեցու օթևանում, ապա երեխան գուշակելու ունակություն կունենար:

Զատկվա ամբողջ շաբաթը ով ինչ ցանկանար՝ կիրականանար և տեսած բոլոր երազները նույնությամբ կկատարվեին: Շաբաթ օրը տանը ոչինչ չպետք է կոտրվեր. գարնան հույսն ու հավատը դրա մեջ էր:

Ավագ շաբաթին չեր կարելի մեղք գործել՝ սիրտ կոտրել, վիրավորել, նմանիդ վշտացնել, առիթ տալ, որ ինքն էլ մեղք գործի, որովհետև «սուսունքի» (լոռության), ներհայեցության, նպատակամղվածության, իրականացումների շաբաթ էր: Հին հայերը այդ օրը հաշտվում էին, չէ որ գնալու էին հաղորդվելու և հաց ցանելու, «որովհետև Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում», այսինքն՝ Քրիստոսն է, որ այդ օրը զոհվում և որպես հաց բաշխվում է մեզ համար:

Զատկվա հաց թխելիս, որքան էլ տանը ալյուր շատ լիներ, ցորեն էին մաղում: Ցորենը մաղով անցկացնելիս (մաղժած), առաջին մաղթաժնից մի բուռ դնում էին Քրիստոսի համար, մի բուռ հիվանդ հարևանի համար, մի բուռ նորաստեղծ ընտանիքի համար, մի բուռ... և այսպես յոթ տուն: Այսինքն՝ հաց տուր, որ հաց բերի:

Այդ օրը հավաքվում էին հարազատները, զրուցում էին, գիշեր էին անցկացնում, չոր մրգերից պատրաստած ըմպելիք էին խմում (խոշաբ), որպես ուրախության նշան, կորիզները կոտրում էին շրիկացնելով: Հյուրերը մաղթանքներ էին տալիս տանտիրոջը և հեռանում: Երբ վերջին հյուրն էր հեռանում, տանտիրուին ճիպոտ էր շարդում (ճիպոտի շարդ), դրանով կոտրելով շարը կամ շարակամների տրամադրվածությունը:

Ավագ հինգշաբթի օրը եկեղեցուց բերված օրինած կարագը քսում էին աչքերին և ճակատին, մարմնի հիվանդ մասերին, որ լավանան, մի կտոր էլ դնում էին յուղի կարագի մեջ, որ տարին օրինաբեր լինի:

Այդ օրը դարբինները մեխն էին ծեծում, յոթ փողոցի տների դռներից հավաքած երկաթից շինում էին շարխափան իրեր, որպեսզի երեխաներն ու կանայք շարից ազատ լինեին:

ՍՈՒԳ ՈՒՐԲԱԹ (ՀՈՒԴԻ ՈՒՐԲԱԹ)

Ավագ ուրբաթը կոչում են Հուդի ուրբաթ: Այդ օրը սգի օր էր, ծոմ էին պահում, կանայք կար էին անում, երեխաները ասեղով փորում էին հողը, իոլ էին խաղում, որպեսզի Հուդայի աշքը հանեին, իբր տանջում էին նրան: Իսկ հարսները անպայման ձեռնարկում էին մեծ լվացք Հուդային մրմուռ պատճառելու նպատակով: Սուգ ուրբաթին անպայման պետք է հողը փորեին, արտևորը գնում էր արտ կոճղեզ հավաքելու (կոճղեզ, որը սպիտակ էր ու նման աշքի: Այն գտնելու համար անհրաժեշտ էր հողի հետ երկար աշխատել, փորփրել):

Այդ օրը եկեղեցում խաչ չեին հանում, որովհետև երկինք-գետին խաչված է, ծունը չեին դնում, որովհետև Քրիստոսը խաչին է, չեին համբուրում, որովհետև Հուդան համբույրով մատնեց Տիրոջը, համբուրողը Հուդային է համբուրում:

ԹԱԹԱԽՈՒՄ

Զատկի շաբաթ օրը ժողովրդի մեծ մասը ծոմ էին պահում, առավոտյան գնում էր եկեղեցի (ծաղիկ-ծաղիկ հագած) ճաշակվում՝ հաղորդություն առնում և գալիս էին տուն: Հաց չեին ուտում այնքան ժամանակ, մինչև չհնչեին եկեղեցու զանգերը, դողանջը ազդարարում էր Պատելը, արդեն կարելի էր գնալ տուն և ճաշակել այն բարիքը, որը օրհնված էր համարվում: Դա թաթախման կամ խթման երեկոն էր, որը պետք է կատարվեր արև-լույսով. «զատիկը արև-լուսով, ծնունդը՝ ճրագ լուսով, Պատերը լուծում էին հավկիթով և նայում արևին, որ արևով ուտեն:

Սարիդամիշի փայտից, սրբատաշ մեծ, երկար, սպիտակ սփոռոցով սեղանի մեջտեղում դրվում էր նախօրոք գարի ցանված սինին, շուրջը շարում էին նախշված ձվերը, գույների մեջ պետք է անպայման պահպանվեր յոթ գույնը, իսկ կարմիրն ու կանաչը պարտադիր էին: Կարմիր, որովհետև Քրիստոսի արյունն էր, կանաչ, որովհետև գարուն էր: Բարձր ունկերով սկահակների մեջ դնում էին գյումրվա գաթա (Բուրմա, դաթով, բոխչա), սահան չորակի, կտրատած շաքար լոխումի: Սինիների մեջ՝ թոնքի եփած փախլավա: Սեղանին դրվում էր «ջեյեզով փլավ», ձուկ, տապակած պատեղ, լոբի, կարմիր գինի, միևնույն ժամանում՝ նավակատիք էր. «զատկե զատիկ է, նավակատիք է»:

Շաբաթ երեկոյան թաթախումից հետո տղամարդիկ տանից դուրս էին գալիս և կրակում, դրանով ճանապարհ էին դնում մեծ պասը:

Զատիկը շարժական տոն է, այն համդիպում է գարնան գիշերահավասարից հետո, լուսնի լրումին և լինում է լուսնի լրման մերձավորագույն կիրակին: Զատիկը լինում էր ապրիլ ամսին, այդ ամսին էլ դուրս էին գալիս «զատիկ» կոչված կարմիր՝ սև պուտիկներով միջատները, գրեթե այդ օրը բոլորը հագնում էին նոր շորեր՝ ոտքից գլուխ: Եվ մեկը մյուսին փոխանակ ասեր «բարով մաշես» ասում էր. «զատիկը վրեդ ծոտել է» կամ զատիկի տոնը ի նկատի ունեին, կամ միջատ զատիկը: Իսկ միմյանց մաղթում էին այսպես.


Սշքը միշտ զատիկ տեսնի,
Այ ու խաշխաջ շոքը հարսիկ (տ. հարսնիք).
Ես տառով ճեր տունը լինի,
Զեր տունը ել միշտ հարսնիք լինի:

ԶԱՏԿԻ ԿԻՐԱԿԻ

Զատկի կիրակի օրը վերջին (ախարի) կիրակին էր: Մատադ էին անում եղինչ, (զարդարված չոր մրգերով ու գունավոր քարերով) մոզի, սրբառ, մատադը եփում էին մեծ կաթսաների մեջ, գիշերը, դրսում, որպեսզի զրհաքերության խորհուրդը եղնի առ Աստված: Առավոտյան քաղի լույսին, «վարիսաշներով» բաժանում էին այն:

Ժողովրդի մեջ ընդունված էր նաև յակաց հացի մատադը:

Կիրակի առավոտյան սկսվում էր ձվկոտրուկը: Նախօրոք աճան հակառակի մածնաշուր էին տալիս, որ ամուր կճեպով ձու ածեին: Մեկ ամսից վերին մածնաշուր էին տալիս, որ ամուր կճեպով ձու ածեին:



Տանը աճեցրած գարի, որի մեջ դրվել են զատկական ձվերը

ավել ձվերը, որոնք պետք է խաղացվեին, դրվում էին աղի կամ աղաջրի մեջ: Բակերում երեխաները հավկիթ էին խաղում: Հավկիթը պահվում էր ափի մեջ, բռունցքի ձևով, ծայրը դուրս թողնելով, որին պետք է խփեր դիմացինը մեկ ուրիշ ձվի գլխիկով: Կամ էլ բարձր թեք տեղից «դար տեղից» հավկիթ էին գլորում. հաղթում էր այն ձուն, որը գլորվելու ընթացքում չարդում էր մյուսին, բայց ինքը չէր կոտրվում: Ում հավկիթը որ հաղթող էր, տանում-թաղում էին այն արտում (դիոլ-զուռնայի նվագակցությամբ), որը ճախորդ տարին նվազ բերք էր տվել:

Զատկվա առաջին ձուն օրհնել էին տալիս յոթ հոգու և խփում էին բակ դուրս բերված լծկան անասունների ճակատին, որպեսզի չարը խափանվի: Այդ ձուն զարդարված էր լինում և պատկերում էր եզան գլուխ (դա արվում էր խմորի գնդիկների օգնությամբ): Պատրաստում էին զատկվա Նուրին՝ այն ձուն, որը կախվում էր պատից և ամեն մի հյուր պետք է ողջուներ նրան ու նոր տուն մտներ: Այն պատրաստվում էր եփած չներկած ձվից: Ալյուրի խյուսով ծլած ցորենի հատիկները ամրացնում էին ձվի գլխիկին և այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե դրանք մազերն էին: Աչքերի տեղը կպցնում էին կանաչ ուլունքներ, որ զատկվա Նուրին կանաչ գարուն բերեր:

Այդ օրը անպայման սեղան էին դնում, իրար տուն այցելում միայն տղամարդիկ, ներս մտնողը ասում էր.

—Քրիստոս հարյավ ի մեռելոց,

Պատասխանն էր.—Օրհնյալ է հարությունն Քրիստոսի:


Կիրակի օրվանից քահանաները տնօրինեք էին պտտվում, քահանան տիրացուի հետ կատարում էր օրհնության ծեսը, սենյակը լցնելով խունկի բույրով: Նրանք սեղանի վրա թողնում էին մի նշխարք, որը պատրաստված էր անթթամոր հացից և վրան դաշված էր Քրիստոսի խաչելությունը և հարությունը: Նշխարքը դրվում էր պարենի, յուղի մեջ որպես մշտամյա օրհնություն: Գիրքը մոտեցնում էր, համբուրում էին ավետարանի վրայի խաչը և քահանայի աջը:

ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի մեռելոց էր, հարազատները այցելում էին հին ու նոր ննջեցյալներին, գերեզմանները օրհնել էին տալիս, խունկ ու մոս ծխեցնում: Շատերը իբր ննջեցյալներին բաժին, իրենց հետ վերցնում էին չներկված ձվեր:

ԿԱՆԱՉ-ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Զատկի տոնակատարությանը հաջորդող կիրակիները «գունավոր կիրակիներն են» Հայկական եկեղեցին զատկին հաջորդող կիրակին անվանում է կրկնազատիկ, սա նշանակում է, որ կրկնվում են զատկական ուրախություններն և տիրող հոգևոր մթնոլորտը: Կրկնազատիկը իր մեջ բռվանդակում է կյանքի վերանորոգության խորհուրդը:



Զատկվա նորի

Զատիկից հետո եկող երկրորդ կիրակին ծանոթ է տոնացուցի մեջ Աշխարհամատրան անունով, ժողովուրդը այն կոչում է կանաչ կիրակի՝ խորհուրդ կյանքի: Կյանքը իր աախճական ձևի մեջ կանաչ գույնով է հանդիպում, որը մարմնավորում է կյանքի հարությունը և մշտնշենական գոդիպում, որը մարմնավորում է կյանքի հարությունը և մշտնշենական գոդիպում: Կանաչ կիրակիին հաջորդում է կարմիր կիրակին: Կարմիր կիրակինը:

բակին մեզ այցելում է ապրիլին կամ մայիսին, այսինքն տարվա այն եղանակին, երբ նոր վերազարթնած բնական կյանքը պայքարի է ելնում ցրտի դեմ:

Կանաչ-կարմիր կիրակիին այցելության էին գնում նորահարսներին: Զատիկի բարիքներից բաժին էին տանում նրանց: Նորահարսներին տարվող սիճին պետք է վերցնեին կույս աղջիկները, սիճիների մեջ դրված էին լինում միրգ, փախլավա, շաքար լոխումի, ներկած հավկիթներ կենտ թվով: Հավկիթը ներկում էին ավելուկի, ղանթափի ջրով, սոխի կճեպով, իշակաթնուկով (կապույտ ծաղիկ): Սիճին զարդարում էին շաքարից շինված ձվերով, որոնց վրա ծաղիկներ կային, նկարված Քրիստոսի, Աստվածածնի, հրեշտակների պատկերներ:

